

Վալանսում կկայանա հայ-Ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության երկրորդ համաժողովը

14.10.2013

Ֆրանսիայի Վալանս քաղաքում կայանալիք հայ-Ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության երկրորդ համաժողովին մասնակցելու նպատակով Ֆրանսիա է մեկնել ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գետրոյանի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում են ֆրանսիական կողմի հետ համագործակցող մարզերի եւ համայնքների ղեկավարներ, ՀՀ էկոնոմիկայի, գյուղատնտեսության, կրթության եւ գիտության, մշակույթի նախարարությունների ներկայացուցիչներ:

Մինչ Վալանս մեկնելը, փոխվարչապետը հոկտեմբերի 14-ին Փարիզում երկկողմ հանդիպումներ կունենա ֆրանսիացի գործընկերների հետ: Հոկտեմբերի 15-ին նախատեսվում են փոխվարչապետի հանդիպումները Լիոնում՝ քաղաքային եւ նահանգային իշխանությունների ներկայացուցիչների հետ:

Հոկտեմբերի 16-ին հայ-Ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության երկրորդ համաժողովի բացմանը փոխվարչապետ Արմեն Գետրոյանը հանդես կգա ելույթով:

Համաժողովի ընթացքում կկազմակերպվի "Հայ-Ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության զարգացում. ներկայի եւ ապագայի խնդիրներ ու նպատակներ" թեմայով կլոր սեղան, ինչպես նաեւ քննարկումներ կծավալվեն չորս՝ "Զբոսաշրջություն", "Կրթություն եւ մշակույթ", "Տեղական տնտեսություն" եւ "Գյուղատնտեսություն" աշխատախմբերում:

Համաժողովի շրջանակում կստորագրվի նաեւ "Հայաստանի համայնքների միության" եւ Ֆրանսիայի Ռոն Ալպ ռեգիոնի միջեւ համագործակցության նորացման համաձայնագիրը: Աշխատախմբերի քննարկումների ամփոփումից հետո՝ հոկտեմբերի 17-ին նախատեսվում է համաժողովի հռչակագրի ընդունում:

Համաժողովի աշխատանքների ավարտից հետո Հայաստանի պատվիրակության կազմում ընդգրկված մարզպետներն ու համայնքների ղեկավարները կմեկնեն գործընկեր համայնքներ եւ տարածաշրջաններ՝ տեղերում փոխգործակցության հեռանկարների քննարկման եւ հնարավորություններին ծանոթանալու համար:

Ֆրանսիայի հետ առկա է ապակենտրոնացված մակարդակով բավականին լայն համագործակցություն. Հայաստանի շուրջ երեք տասնյակ համայնքներ, այդ թվում՝ մայրաքաղաք Երեւանը, արդյունավետ փոխգործակցում են Ֆրանսիայի քույր քաղաքների հետ: Մարզերից Գեղարքունիքը համագործակցում է Իզերի, Շիրակը՝ Բուշ դյու Ռոնի, Լոռին՝ Պրովանս Ալպ Կոտ դ' Ալյուրի, Տավուշը՝ Օ դը Սենի դեպարտամենտի հետ:

Հայ-Ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության առաջին համաժողովը տեղի էր ունեցել 2010թ-ին, Երեւանում: Այս ձեւաչափն ուղղված է միջտարածաշրջանային եւ միջհամայնքային կապերի ամրապնդմանն ու խորացմանը:

ՏԿՆ հասարակայնության հետ կապերի բաժին

Վալանսում աշխատանքն սկսեց հայ-Ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության երկրորդ համաժողովը

16.10.2013

Ֆրանսիայի Վալանս քաղաքում այսօր աշխատանքներն սկսեց հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության երկրորդ համաժողովը, որի բացմանը ելույթով հանդես եկավ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեորգյանը: Փոխվարչապետը ողջունեց համաժողովի մասնակիցներին՝ մաղթելով արդյունավետ աշխատանք: Նա ընդգծեց, որ Հայաստանը կարևորում է ավանդական բարեկամ երկրների հետ համագործակցությունը եւ նրանց փորձի կիրառումը մեր բարեփոխումների գործընթացում:

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեորգյանի ելույթը՝ հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության երկրորդ համաժողովի բացմանը

Համաժողովի հարգելի մասնակիցներ,

Հարգարժան դեսպաններ,

Հարգելի հյուրեր,

Տիկնայք և պարոնայք

Թույլ տվեք ողջունել համաժողովի մասնակիցներին, ներկաներին և մեր պատվիրակության ու իմ անունից շնորհակալություն հայտնել ֆրանսիացի գործընկերներին համաժողովի աշխատանքների կազմակերպման, և անպայման՝ ջերմ հյուրընկալության համար: Ապակենտրոնացված համագործակցության երկրորդ համաժողովը կարևոր հանգրվան է մեր ընթացքի համար, հանգրվան, որին հասել ենք որոշակի արդյունքներով, համայնքների ու տարածքների միջև նոր ձևավորված համագործակցությամբ ու շփումներով, ու նաև ապագայում այս գործընթացը նոր բովանդակությամբ հավելելու կամքով:

Մենք կարևորում ենք Հայաստանի համար ավանդական բարեկամ երկրների հետ համագործակցությունը և նրանց փորձառության կիրառումը մեր պետականաշինության գործընթացում: Այդ երկրների շարքում առանձնահատուկ նշանակություն ունի Ֆրանսիան: Ազգային մակարդակում մեր երկրների համագործակցությունը օրինակելի է, գտնվում է անընդհատ զարգացման ու խորացման ընթացքում: Դրա վկայությունը ոչ միայն բարձր քաղաքական մակարդակում համագործակցությունն է, այլ նաև ֆրանսիական գործարարության լայն ներգրավվածությունը Հայաստանի տնտեսության տարբեր ոլորտներում:

Հայ ֆրանսիական հարաբերությունների հարատևությունը նոր ապացույցների կարիք չունի՝ տարիների հետ դրանք նոր որակ են ձեռք բերում՝ ընդարձակվելով իրենց աշխարհագրությամբ, հարստանալով ու խորանալով իրենց բովանդակության մեջ ու ամրապնդելով մեր երկու ժողովուրդների բարեկամության խորը ավանդույթները, ձեռք բերելով հասարակական ու քաղաքական նոր ու բովանդակալից շեշտադրումներ:

Միաժամանակ ուրախ ենք, որ ընդլայնվում է մեր հասարակությունների տարբեր հատվածների միջև երկխոսությունը՝ ընդգրկելով հանրային կյանքի տարբեր ոլորտներ: Մասնավորապես կնշեի կրթության բնագավառում հաջողությամբ գործող հաստատությունները, որոնցից ամենահիմնականներից է Հայ-ֆրանսիական համալսարանը:

Հատկապես և առանձին պետք է նշել մեր բազմամակարդակ համագործակցության մի կարևոր հարթակի՝ Ֆրանկոֆոնիայի մասին: Այս հարթակը լայն հնարավորություն է, կարելի է ասել՝ բացառիկ հնարավորություն՝ հայ-ֆրանսիական մերձեցմանն ուղղված նոր գործիքակազմ ու ուղղություններ ոչ միայն նախանշելու, այլ հաջողությամբ իրականացնելու համար: Ֆրանկոֆոնիայի «Հավասարություն, փոխլրացում, համերաշխություն» նշանաբանը առավել քան ուղիղ է արտահայտում այս կազմակերպության հումանիստական, զարգացմանն ուղղված արժեքների համամարդկային ընդգրկումը:

Առանձնահատուկ կցանկանայի նաեւ խոսել Ֆրանսիայի և, մասնավորապես, Ռոն Ալպի հայ համայնքի մասին, որն ակտիվ մասնակցություն է ունեցել համաժողովի կազմակերպման և, ընդհանրապես, հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության կայացման գործում:

Ֆրանսիայի հասարակական, քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքում ներգրավվածությամբ եւ ունեցած նշանակալի ներդրումով հայ համայնքը դարձել է Ֆրանսիայի պատմության մի մասը՝ միաժամանակ սերնդե սերունդ պահպանելով իր ինքնությունը, ազգային արժեքներն ու ավանդույթները:

Այս համաժողովը ոչ միայն արդյունքն է մինչ այս կատարված մեր աշխատանքների, այլև ամփոփումն է ու նոր հնարավոր զարգացումների արձանագրման լավ հնարավորություն է:

Ապակենտրոնացված համագործակցության կարևոր սուբյեկտներ են մեր վարչատարածքային միավորները՝ մարզերն ու համայնքները: Գոհունակությամբ կարելի է արձանագրել, որ տարեց տարի ընդլայնվում է մեր համայնքների, մարզերի և ֆրանսիական վարչատարածքային միավորների համագործակցության կազմը,

երկկողմանի համագործակցությունը լցվում է նոր բովանդակությամբ, առաջ են գալիս նոր ձևաչափեր:

Հայ- ֆրանսիական համագործակցությունը ապակենտրոնացված մակարդակում իր արտահայտությունն է գտնում նաև միջազգային տարբեր կառույցներում մեր համատեղ աշխատանքի համատեքստում:

Տեղական ինքնակառավարման մարմինների հայ- ֆրանսիական արդյունավետ համագործակցություն է ծավալվում Եվրոպայի խորհրդի համապատասխան կառույցներում: Միջազգային հարթակներում համագործակցում են նաև մեր մարզերը, մասնավորապես, անդամակցելով Եվրոպայի ռեգիոնների ասամբլեային:

Վերջապես՝ ֆրանկոֆոնիայի շրջանակում համագործակցությունը, որը շարունակական զարգացում է ապրում, և ակնհայտորեն ունի ապակենտրոնացված համագործակցության նոր ոլորտներ ու ձևաչափեր ներառելու դեռևս չիրագործված մեծ ներուժ:

Մենք շարունակում ենք աշխատանքները մեր՝ դեռևս ժամանակագրության առումով երիտասարդ տեղական ժողովրդավարության ամրապնդման ուղղությամբ: Դա մշտական աշխատանք է, և զարգացումների բովանդակությունն ու ծավալը պայմանավորված են հասարակական կյանքի այլ ոլորտներում ընթացող զարգացումներով: Տեղական ժողովրդավարության մեր ընտրված չափանիշները բխում են տեղական ինքնակառավարման մասին եվրոպական հռչակագրից: Առավել ունակ, ապակենտրոնացման արդյունքում ավելի մեծ ծավալով լիազորություններով օժտված համայնքները ապակենտրոնացված համագործակցության համար լավ գործընկերներ են մի կողմից, և ապակենտրոնացված համագործակցությունը հանդիսանում է դպրոց ժամանակակից լավ կառավարման համար անհրաժեշտ ունակությունների ձեռք բերման, փորձի փոխանակման համար:

Ապակենտրոնացման քաղաքականությունն այսօր էլ մնում է ՀՀ կառավարության օրակարգում. մենք ունենք Եվրոպայի խորհրդի հետ համատեղ մշակված ու հաստատված ապակենտրոնացման հետագա քայլերի գործողությունների առաջիկա երեք տարիների ծրագիր:

Հեռահար նպատակադրումը տեղական ժողովրդավարության զարգացումն է, տեղական մակարդակում տեղական նշանակության խնդիրները արդյունավետ լուծելու ունակ իշխանությունների ձևավորումը: Այս առումով է որոշիչ դառնում տնտեսական զարգացումը, հատկապես նրա համաչափ տեղաբաշխումը տարածքային առումով: Դրա նպատակն է ստեղծել պայմաններ համայնքի բնակիչների կայուն եկամուտների ձևավորման համար: Այս գործում տեղական

իշխանությունները կարող են և պետք է կարևոր դերակատարում ունենան: Նրանք է, որ պետք է նախաձեռնեն և իրականացնեն ծրագրեր, որոնք հնարավոր կդարձնեն տեղական էկոլոգիական, գյուղական, էթնոգրաֆիկ և այլ ժամանակակից զբոսաշրջային հետաքրքրությունների ներգրավումը, տեղական արհեստագործության զարգացումը, մշակութային կյանքի աշխուժացումը և այլն: Հաշվի առնելով գյուղատնտեսության նշանակությունը համայնքների զարգացման համար՝ մեր գերակա խնդիրն է ունենալ բարեկեցիկ կենցաղով ապրող գյուղ, որտեղ յուրաքանչյուր բնակիչ հնարավորություն ունի զբաղվելու արդյունավետ գյուղատնտեսությամբ: Տարածքային համաչափ զարգացման և գործարար միջավայրի ձևավորման համար ներդաշնակ պայմանների ապահովման առումով որոշիչ նշանակություն ունեն կառավարության կողմից իրականացվող ենթակառուցվածքների՝ ճանապարհային, ջրամատակարարման, էներգամատակարարման, կապի կառուցման ու բարենորոգման ծրագրերը, ինստիտուցիոնալ կարգավորման աշխատանքները: Կառավարության կողմից, ինչպես նաև պետություն-մասնավոր համագործակցության շրջանակներում իրականացվում են տարածքային առումով նաև նպատակային ծրագրեր՝ Դիլիջան, Ջերմուկ առողջարանային քաղաքներ, Ծաղկաձոր զբոսաշրջային կենտրոն, Տաթևի ճոպանուղի և այլն: Այս մասշտաբային ծրագրերի արդյունքում ձևավորված գրավիչ միջավայրում հնարավորություններ են ձևավորվում նաև համայնքային նախաձեռնությունների համար:

Այս մարտահրավերներին արձագանքելու համար մենք պետք է ապահովենք տեղական ինքնակառավարման համակարգի դինամիկ զարգացումը: Մեր քաղաքական օրակարգում են վարչատարածքային բարեփոխումները, մասնավորապես համայնքների խոշորացումը: Արդյունքում պետք է ձևավորվեն կառավարման առումով օպտիմալ, հետագա ապակենտրոնացման համար անհրաժեշտ հնարավորություններով օժտված համայնքներ, որոնք ունակ են լինելու արձագանքել վերը նկարագրված մարտահրավերներին:

Այս զարգացումները ունեն կարևոր և կենտրոնական նպատակ՝ համայնքի բնակիչը, նրա համար ապրելու, աշխատելու, այլ խոսքով կյանքի՝ ժամանակակից չափորոշիչներին բավարարող ու հարմարավետ միջավայրի ձևավորումը:

Վստահ եմ, որ նաև հայ ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցությունը նպաստելու է Հայաստանում ամուր համայնքների ձևավորմանը:

Մենք կարևորում ենք ապակենտրոնացված համագործակցության միջոցով նաև փորձի փոխանակումը և տեղական իշխանությունների կարողությունների զարգացումը:

Երեկ մեր պատվիրակության մասնակցությամբ ստորագրվեց Ֆրանսիայի Ռոն Ալպ ռեգիոնի և Հայաստանի համայնքների միության համագործակցության նորացման համաձայնագիրը, որի արդյունքում Հայաստանի տարբեր ռեգիոններում իրականացվում են բազմադերակատար և համաֆինանսավորումներով ծրագրեր տարբեր ոլորտներում:

Հայ-Ֆրանսիական ապակետրոնացված համագործակցությունը տեղի է ունենում տեղական իշխանությունների միջև, սակայն նաև այս համաժողովի մասնակցության ձեւաչափը վկայում է, որ մասնակից կողմերն ավելի շատ են: Ֆրանսիական քաղաքների հետ ներգրավված են տեղի հայկական կառույցները, մասնագիտական, բիզնես կառույցներ, Հայաստանի քաղաքների հետ ներգրավված աշխատում են տեղական հասարակական կազմակերպություններ, կրթական հաստատություններ, ֆրանկոֆոն կառույցներ, բիզնես կազմակերպություններ:

Կցանկանայի առանձնահատուկ ընդգծել եւ ողջունել նաեւ Զարգացման Ֆրանսիական գործակալության կողմից ապակենտրոնացված համագործակցության զարգացմանն աջակցելու պատրաստակամությունը՝ համայնքների հետ տարբեր ծրագրերի իրականացման միջոցով:

Վստահ եմ, որ մեր աշխատանքները նոր գաղափարներով ու եզրույթներով կհագեցնեն մեր համագործակցությունը, դարձնելով այն առարկայական ու տեսանելի մեր հասարակությունների համար:

Մեր համաժողովին մաղթում եմ արդյունավետ աշխատանք :

Շնորհակալություն: